Ն. Ք. ԱՎԱԳՅԱՆ

ՍՈՒԵԴԱՀԱՅԵՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԿԵՆՑԱՂԻ ՑՈՒՑԱՆՄՈՒՇՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ

Սուեդիան օսմանյան միապետության ենթակա Հալեպի մարզի շրջաններից մեկն է եղել[1], կենտրոնը՝ Սուեդիա գյուղը, որը ընկած է եղել Անտիոքի ավերակներից դեպի արևելք։ Շրջանի բնակիչներն էլ կոչվել են սուեդահայեր։

1913 թվականին սուեդահայերի ընդհանուր թիվը կազմել է 6311 հոգի, բաղկացած 1235 ընտանիքից[2]։ Անտիոքից դեպի արևմուտք ձգվել է սուեդահայերի գյուղերի շարքը։ Առաջինը Բիթիաս գյուղն է։ Այն կառուցված է եղել բլուրի վրա, օժտված բնության բազմազան գեղեցկություններով։ Բիթիասը հարուստ է եղել թթենիներով և պարտեզներով։ Գյուղի հյուսիսային մասում գտնվում է Մուսա լեռը (Ջաբալ Մուսա), որի բարձրությունը ծովի մակերևույթից 1255 մետր է։ Այս գյուղի մոտ է եղել սուրբ Հովհան Ոսկեբերանի եկեղեցին, ուր տոն օրերին հավաքվել են սուեդահայերը, զվարճացել։ Բիթիասը ունեցել է 195 ընտանիք, 1050 հոգի բնակչությամբ։

Բիթիասի մոտ է գտնվել Հաջի-Հաբիբլի գյուղը, որի դիրքը ավելի ցածր է։ Գյուղի հարավային և արևմտյան մասերում կան մեծ և փոքր բլուրներ։ Արևմտյան մասի բլուրների արանքից երևում է Միջերկրական ծովը։ Հաջի-Հաբիբլին շնչած շրջապատված է եղել պարտեզներով, բայց նմանվել է քաղաքի, տները համեմատաբար խիտ են եղել. բնակչության թիվը՝ 1284 հոգի, 257 ընտանիք։

Շղթայի հաջորդ գյուղը Յողուն-Օլուքն է, որը նույնպես շրջապատված է եղել պարտեկներով։ Յողուն-Օլուքը ունեցել է 1233 հոգի բնակչություն, բաղկացած 255 ընտանիքից։

Այս գյուղից դեպի արևմուտք ձգվել է Քաբուսիեն, որի արևմտյան մասում Մուսա լեռան բլուրներն են, իսկ հարավից՝ Միջերկրական ծովը։ Բնակչության թիվը՝ 1125 հոգի, 251 ընտանիք։

Յողուն-Օլուքից ոչ հեռու Խրդրբեգ գյուղն է եղել, ամբողջովին ծածկված գեղեցիկ մրգաստաններով։ Թաղերը իրարից բաժանվել են պարտեզներով։ Խրդրբեգի բնակչության թիվը եղել է 1149 հոգի, 195 ընտանիք։ Գյուղի բարձրությունը ծովի մակերևույթից՝ 150 մետր է։ Այս գյուղում է եղել պատմական սոսի ծառը, որը շատ հին է, ըստ բնագետների հայտարարության, աշխարհի խոշորագույն ծառերից մեկն է համարվել։ Նրա բունը շատ լայն է և ծառայել է որպես սրբատեղի։

Շղթայի վերջին գյուղը Վագրֆն է։ Գյուղը բաժանված է եղել թաղերի, ինչպես Խրդրբեգը և թաքնված պարտեզների մեջ։ Վագրֆում բնակվել են 82 ընտանիք, 470 հոգի բնակչությամբ։ Եղել են նաև Վերին և Ներքին Էզզեյր,

---

1 *Սուեդիա բառը սելևկյանների Սելևկիա քաղաքի անունից է ժառանգված (հնչյունափոխված ձևով)։*

2 *Տոքթ. Մ. Սայրի, Ալեպեներ եւ խլեպեներ, Աղեքսանդրիա, 1920, էջ 9. բնակչության վերաբերյալ բոլոր թվական տվյալները վերցված են նշված աշխատությունից։*

Մանձըլար, Գըձտըրլեր փոքր գյուղերը, որոնց բնակչության թիվը հաշված է Խըդըրբեգի հետ։

* *
*

Համաշխարհային իմպերիալիստական պատերազմի օրերին թուրքական կառավարությունը սկսեց տեղահան անել հայ ժողովրդի արևմտյան հատվածին։ Թալեաթ, Էնվեր, Ջեմալ փաշաների արյունոտ ձեռքերով ստորագրված էր հատուկ հրաման, որի համաձայն պետք է ոչնչացվեր ամբողջ հայությունը և Հայաստանը վերացվեր աշխարհի քարտեզից։

Իթթիհադական կուսակցության պարագլուխների կողմից հայ բազմաթիվ ընտանիքներ բնաջնջվեցին հայրենի օջախներում։ Արյունարբու թուրք ենիչերիները ավերեցին Կարսը, Էրզրումը, Իգդիրը, Սիսը, Վանը, Տիգրանակերտը։ Տեղահան արին գրեթե ամբողջ արևմտահայությանը և քշեցին Տեր-Զորի անապատները, ենթարկելով նրան աներևակայելի խոշտանգումների։

Թուրքական կառավարության այս հայաջինջ քաղաքականության դեմ ըմբոստացան Տարոնի, Շապին-Գարահիսարի, Ուրֆայի, Վասպուրականի, Սուեդիայի հայերը։ Նրանք զինված հերոսական մարտեր մղեցին թուրք բանակայների դեմ։

Սուեդիայի հայերը գերադասեցին չենթարկվել իրենց ազգակից եղբայրների ու քույրերի ճակատագրին։ Նրանք բարձրացան Մուսա լեռ, որոշելով ընկնել պատվավոր մահով հայրենի լեռան լանջերին, քան մահաբեր տարագրության ճանապարհը բռնել։

Դյուցազնական մարտեր մղեցին Մուսա լեռան վրա, քաջագործության անկրկնելի օրինակներ ցույց տվեցին Մարտիրոս Հաբեշյանը, Հովհաննես Լուրջյանը, Մարտիրոս Ջանպոլյանը, Եսայի Յաղուբյանը, Պետրոս Տըմլաքյանը, Պետրոս Գալստյանը և ուրիշներ։

1914 թ. սեպտեմբերի 12-ին ֆրանսիական հինգ նավով կազմակերպվում է հաղթանակ տարած Սուեդիայի ժողովրդի փոխադրումը Պորտսաիդ, նրա մոտ գտնվող Լազարեթ-վրանաքաղաքը։ Յուրաքանչյուր գյուղ վրանաքաղաքում ունենում է իր որոշակի տեղը 25-ական վրանով։ Վրանաքաղաքի բնակչության թիվը մոտ 4000 է եղել։ Այստեղ սուեդահայերը ապրել են չորս տարի, 1919—1920 թթ. վերջերին վերադարձել են Ջեբել Մուսա։ 1939 թ., երբ Ալեքսանդրետի սանջաքը կցվում է Թուրքիային, սուեդահայերը կրկին ստիպված են լինում թողնել իրենց հայրենիքը և հաստատվել Լիբանանում (Այնճար)։

1946—1947 թթ. մոտ 700 սուեդահայ ընտանիք գալիս է Սովետական Հայաստան և մշտական բնակություն հաստատում նրա տարբեր շրջաններում։

* *
*

Օրհասական պայքարի կրակով ու բոցով անցած Մուսա լեռան հերոսամարտերի մասնակիցները քաջ գիտակցելով ժողովրդի դարավոր մշակույթի նշանակությունը, պահել, փայփայել, հեռավոր Սուեդիայից մայր Հայաստան են հասցրել այդ մշակույթի բազմատեսակ նմուշներ։

Հայաստանի պատմության թանգարանի նոր պատմության և ազգագրության բաժինների գիտական աշխատողների ջանքերով հետազոտվեցին ու գրի առնվեցին Երևանի Շահումյանի շրջանում բնակվող սուեդահայերի կենցաղին,

սովորություններին վերաբերող նյութերը և ձեռք բերվեց ազգագրական առարկաների մեծ ժողովածու, ինչպես նաև լուսանկարներ։

Սուեդիայի գյուղերում բնակչության հիմնական զբաղմունքը եղել է պարտիզպանություն, այգեգործությունը, գինեգործությունը։ Այգեգործությունը հատկապես զարգացած է եղել Խրդրբբեգ, Վագրֆ, Քաբուսիե գյուղերում։ Այս գյուղերում աճեցրել են խնձորի, տանձի, նարնջի, թզի և խաղողի բնտիր տեսակներ։ Բիթիասը արտադրել է մեծ քանակությամբ գետնախնձոր, որի արտեր եղել են Մուսա լեռան լանջերին։

Հայահատիկային կուլտուրաներից Սուեզիայում տարածված է եղել ցորենի, գարու, կորեկի, եգիպտացորենի մշակումը, բայց անհրաժեշտ հացահատիկը բնակչությունը գնել է Անտիոքից։

Սուեզիայում կարևոր նշանակություն է ունեցել ձիթենու մշակումը։ Ընտիր ձեթ է արտադրվել Յողուն-Օլուք, Խրդրբբեգ և Վագրֆ գյուղերում։

Ձեռք բերված իրերի մեջ կան այգեգործական և գյուղատնտեսական գործիքների տարբեր տեսակներ՝ գութանի խոփ, մանգաղ, կացին, ցակատ, որոնց մի մասը հերոսամարտերի ժամանակ օգտագործվել է նաև որպես սառը զենք[3]։

Արհեստներից Սուեզիայում զարգացած է եղել պղնձագործությունը, փայտագործությունը, գգալագործությունը, սանրագործությունը, առավելապես մետաքսագործությունը, եղել են նաև ոստայնանկներ, ոսկերիչներ, երկաթագործներ, որմնադիրներ, կոշկակարներ, սափրիչներ, անագագործներ, վաճառականներ։

Փայտագործության հայտնի վայր են եղել Հաջի-Հաբիբլի և Բիթիաս գյուղերը։ Սուեդահայ վարպետները փայտից պատրաստել են կենցաղային փորագրազարդ առարկաներ՝ գդալ, պատառաքաղ, աղաման, բաժակ և այլն։ Բիթիասը հայտնի է եղել նաև փայտածուխի արտադրությամբ. փայտագործներ են եղել նաև Յողուն-Օլուրում։ Փայտը փորող, գդալ պատրաստող գործիքը, որ տեղական բարբառով կոչվում է ագդա, արտադրվել է Յողուն-Օլուրում։

Ժողովածուում կան ագդայի մի քանի տեսակներ, գդալներ, գդալի կաղապար-ձևեր, բաժակներ, պատառաքաղներ և այլ փայտյա առարկաներ։ Յողուն-Օլուք գյուղի տղամարդկանց հիմնական զբաղմունքը եղել է սանրագործությունը։ Կարծր փայտից և ոսկրից պատրաստել են սանր, ծխամորճ, արձանիկներ, որոնք վաճառքի են հանել Հալեպի, Երուսաղեմի, Դամասկոսի, Եգիպտոսի շուկաներում։

Սուեզիայի հայ բնակչության փրկարարներից մեկը՝ Եսայի Յաղուբյանը, նույնպես զբաղվել է սանրագործությամբ։ Ձեռք բերված ժողովածուումն է Եսայի Յաղուբյանի ձեռքի աշխատանքը՝ սպիտակ ոսկրից պատրաստված սանրը, նոր աշխարենի ծառի փայտից պատրաստված աղամանը, դոսախ կոչված ծառի փայտից փորագրազարդ պատառաքաղը, ինչպես նաև նրա անձնական գործածության իրերը՝ զգեստը, ժամացույցը, կենցաղային այլ առարկաներ, աշխատանքային գործիքներ[4]։

---

3 Հայաստանի պատմության թանգարանի ազգագրական ֆոնդ, N 8083/43, 8083/48, 8083/53, 8083/60, 8097/20, 8097/21, 8097/22։

4 Հայաստանի պատմության թանգարանի ազգագրական ֆոնդ, 8097/1, 8097/2, 8097/9, 8097/10, 8097/13, 8097/18։

Սուեդիայի գյուղերում զարգացած է եղել ժանյակագործությունը։ Սուեդահայ կանայք մետաքսյա, բամբակյա թելերից պատրաստել են ասեղնագործ նուրբ ծածկոցներ, որոնք մեծ մասամբ օգտագործվել են կանացի գլխաշորի (յաշմա) եզրերը զարդարելու համար։ Ժանյակագործությամբ հայտնի են եղել Հաջի-Հաբիբլի, Քաբուսիե, մասամբ էլ Վադրֆ գյուղերը, որոնց արտադրանքը վաճառքի է հանվել Անտիոքի շուկայում (տե՛ս նկ. 3, 3ա, 3բ)։ Ժանյակագործությամբ որոշ չափով զբաղվել են նաև Յողուն-Օլուքում։ Ժողովածուում կան Յողուն-Օլուքում ասեղնագործված երկրաչափական և բուսական նախշերով ժանյակներ՝ օձիք, արտազգեստի թևաբերան, սանրաման, այդ թվում նաև Եսայի Յաղուբյանի կնոջ՝ Իսկուհու գլխաշորը (դուլակը, նկ. 4), զարդարված իր կատարած ասեղնագործ նեղ ժանյակով։ Գլխաշորը քառանկյունաձև է, մոխրագույն բամբակյա նուրբ կտոր, դաջած ծաղկանախշերով։ Զեռք է բերված նաև Իսկուհի Յաղուբյանի օգտագործած գործիքը՝ մաքոքը, որով նա գործել է ժանյակ թե՛ միագույն և թե՛ մետաքսյա գունավոր թելերով։

Սուեդիան հայտնի է եղել նաև իր շերամապահությամբ։ Թթենիների մշակումը նպաստավոր պայման է հանդիսացել շերամապահության զարգացման համար։ Հունդ աճեցնողներ են եղել Յորդի Իսկանդարյանը (Հաջի-Հաբիբլեցի), Աբրահամ Ռանջիլյանը (բիթիասցի)։ Սրանց աճեցրած հունդը ավելի շուտ է սպառվել, քան Եվրոպայից եկածը։

Տեղում արտադրած մետաքսաթելով գործել են կտորների տեսակներ, որոնք, ըստ տեղացիների վկայության, մրցել են Լիոնի մետաքսեղենի հետ։ Ժողովածուում կան Հաջի-Հաբիբլի գյուղում արտադրված մետաքսյա շերտավոր, վանդակներով, միագույն նուրբ կտորներ և նրանցով կարված զգեստի տեսակներ (նկ. 1), ինչպես նաև կտոր գործելու տարբեր մեծության հաստոցի մասեր։ Հաջի-Հաբիբլիում եղել է 32 մետաքսյա կտոր գործելու, 10 կտավ, «շոտ-ընկա» և աբա գործելու հաստոց։ Աբայի կտոր գործող հայտնի վարպետ է եղել Մարտիլ Կրորկյանը։

Սուեդահայ կանայք հագել են շապիկ, շապկընկեր՝ սպիտակ գույնի կտավից, նրա վրայից դեյրա-ֆստան, որը կարել են սովորաբար բամբակյա գծավոր կտորից, իսկ նորահարսինը՝ մետաքսյա կտորից, վերջինս կոչել են բիրբսմը-ֆստան։ Կապել են մետաքսյա կտորից գոտի։ Հասակավոր կանայք, որոնց տատի-մայր են կոչել, հագել են գծավոր կտորից կարված անթարի։ Նրանց գոտին եղել է բրդյա (քիրման շալ), որը տեղական բարբառով անվանել են աջամ շալ։ Փողոց դուրս գալիս ֆստանի վրայից հագել են մուգ գույնի բամբակյա կամ բրդյա կտորից կարված վերնազգեստ — փալթե։

Գլխի հարդարանքը եղել է հետևյալը՝ ծածկել են ֆես, որի դագաթից կախված է եղել փնջիկ, կապել են յաղմա, բորոցներով ամրացրել ֆեսի վրա։ Նրա վրայից ձգել են մետաքսյա երկար, քառանկյունաձև սպիտակ գույնի գլխաշորֆիշտ, որի ծայրերը կախվել են մինչև սրունքները։ Նորահարսի դեմքը ծածկել են փաչո կոչվող նուրբ մետաքսյա կտորով։ Աղջիկները ծածկել են ֆես, զարդարված երեք շարք դրամներով, իսկ ֆեսի վրայից կապել են գլխաշոր։ Ավելի փոքր աղջիկները մազերին կապել են ժապավեն-կորդիլա։ Հատուկ զերձակներ չեն եղել, կանայք և աղջիկները կարել են իրենց զգեստները միմյանց օգնությամբ։

Ադանելիքը եղել է գուլպան, կոշիկը, էմանին։ Արտ գնալիս հագել են ճրտկավոր կոշիկ։ Կանայք կրել են ոսկյա կրծքազարդեր։ Աղջիկը՝ մինչ ամուսնա-

նալը. կրծքից կախել է ապակուց կամ մարջանից ուլունքներ, իսկ ամուսնությունից հետո՝ ոսկյա շարան մանյակ, որը ստացել է փեսայուից իբրև նվեր։

Սուեդահայ աղամարդկանց գլխաոր եղել է շապիկ. շապկընկեր կարված սպիտակ գույնի բիազից. դրանց վրայից հագել են շալվար-գալվուր՝ բամբակյա կտորից։ Կապել են գծավոր կտորից գոտին։ Գոտուց կախել են քիսիկը, որի մեջ պահել են ծխախոտ։ Հագել են ելակ, որի աջ ու ձախ առջևամասը զարդարել են երկայնակի դասավորված կոճակների շարանով. այն կոճկվել է դայթանի օղակներով։ Ելակի վրայից հագել են աբա, որը եղել է երկար՝ մինչ ծընկները, իսկ թևերը՝ մինչ արմունկը։ Աբան գործել են այծի մազից (մուդ)։

Գլխարկը եղել է թաղիքից. տեղական բարբառով այն կոչել են քուլախ, որի վրա փաթաթել են գլխաշոր կամ էլ քաֆիա[5]։ Քաֆիան ծալել են շեղակի, կամ թույլ ոլորել, փաթաթել գլխարկի շուրջը. մեկ փնջիկը կախել են ականջի վրա, իսկ մյուսը մնացել է փաթաթանի տակ։

Ոտքերին հագել են բրդյա սպիտակ, մոխրագույն գուլպա, կարմիր կամ դեղին գույնի երկարաճիտ կոշիկ՝ չաքմա։

Բնակչության զբաղմունքներից մեկն էլ եղել է անասնապահությունը։ Ոչխարի ընտիր տեսակի բրդից սուեդահայ կանայք գործել են կարպետ, խուրջին, գուլպա և այլ գործվածքներ։ Բրդյա գործվածքները զարդարել են երկրաչափական, բուսական նախշերով։ Ձեռք բերված առարկաների մեջ կա մեծ խուրջին, գործված բրդյա գունավոր թելերով։ Նրա վրա արված են շերտավոր նախշեր, զարդարված երկու շարք փնջիկների շարանով։ Սուեդահայերի մեջ շատ տարածված է եղել հայ ժողովրդի ազգային կերակուրներից հարիսան, որը եփել են պղնձյա մեծ կաթսայի մեջ։ Ձեռք է բերված Եսայի Յաղուբյանի տան հարիսայի կաթսան (նկ. 2)[6]։ Կաթսան ունի պայտաձև երկու բռնակ, շուրթը զարդարված է գծանախշերով, պատրաստված է Անտիոքում, հայ վարպետի ձեռքով։ Ըստ մուսալեռցիների հաղորդման, այդ կաթսան օգտագործվել է նաև պաշարման օրերին։

Ձեռք բերված ժողովածուի մեջ ուշագրավ են գենքերը՝ մեկ և երկփողանի հրացանները, զինագործ Հովհաննես Եղյանի պատրաստած դաշույնները, վառոդի տեսակները, որը պատրաստված է պաշտպանության ժամանակ։

Ժողովածուում է նաև Յաղուբյանների տան ծղոտից գործված սալան, որը տեղական բարբառով կոչվում է թաբուխ։ Թաբուխը օգտագործվել է հարսանիքի ժամանակ՝ հարսի շորերը, ուտելիքները, նվերները տանելու համար։ Տեղացիները ճոխ են համարել այն հարսանիքը, երբ մի քանի թաբուխ են դուրս բերել գլխներին դրած։

Ձեռք են բերված նաև Հայկական բարեգործական ընդհանուր միության Հաջի-Հաբիբլիի մասնաճյուղի և թաղական ժողովի կնիքները, քարտաշի, որմնադիրի գործիքներ և բազմաթիվ այլ առարկաներ։

---

5 Քաֆիան մետաքսյա կտոր է, որը գործել են հատուկ հաստոցով։ Այն քառանկյունաձև է, նրա չորս անկյունում կատարել են մեկական, իսկ կենտրոնում՝ երկու մաքոքաձև նախշ։ Քաֆիան եղել է նաև շերտերով, իսկ շերտերի մեջ՝ ծաղկանախշեր։ Նրա երկու անկյունում ամրացրել են մեկական փնջիկ. այսպիսով, մեկ քաֆիան ունեցել է երկու փնջիկ։

6 Հայաստանի պատմության թանգարանի ազգագրական ֆոնդ, 8097/15, տե՛ս նկ. 2։



Նկ. 1. Գոտիներ, մետաքս, Հաջի Հաբիբլի, 1913 թ. (Հայաստանի պատմության թանգարան, աղղագրական ֆոնդ, 8083/36, 8083/37)

Նկ. 2. Կաթսա, պղինձ՝ օգտագործված Եսայի Ցաղուրյանի տանը (Հայաստանի պատմության թանգարանի աղղագրական ֆոնդ, 8097/15)



Նկ. 3. Օձիք-ժանյակ, Յողուն-Օլուք. 1913 թ.
(Հայաստանի պատմության Թանգարան,
լուսապրական ֆոնդ. 8097/5)



Նկ. 3ա. Օձիք-ժանյակ, բամբակյա թելով
սեղնագործված, Յողուն-Օլուք. 1913 թ.
(Հայաստանի պատմության Թանգարան,
լուսապրական ֆոնդ. 8097/4)



Նկ. 3բ. Ժանյակ, գլխաշորի եզրերի համար, գործ Իսկուհի Յազուբյանի, 1913 թ. (Հայաստանի պատմության թանգարան, ազգագրական ֆոնդ, 8083/40)



Նկ. 1. Գլխաշորեր (գույակ). Իսկուհի Յազուբյանի, 1913 թ. (Հայաստանի պատմության թանգարան, ազգագրական ֆոնդ, 8097/3, 8097/17)

Այս ժողովածուն հետաքրքիր աղբյուր է հանդիսանում Սուեդիայի հայերի պատմության ու ազգագրության ուսումնասիրման, նրա մշակույթի, կենցաղի, սովորությունների մի շարք հարցերի պարզաբանման համար։

Ժողովածուն հարստացրեց թանգարանի ազգագրական բաժնի, հայ ժողովրդի այդ հատվածի վերաբերյալ նյութական մշակույթի ֆոնդը։

Սուեդահայերից ձեռք բերված կենցաղային առարկաները ցուցադրված են այդ ժամանակաշրջանի պատմությանը նվիրված հատուկ սրահում։